



Համաձայնեցված է
Ֆինանսների և էկոնոմկայի
մինիստրի
Ս. Թևոյան
հունվարի 2015թ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«14» փետրվարի 2015թ.

N 181/Մ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 188/Մ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ
հոդվածի համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013
թվականի օգոստոսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական
հաստատությունների նախադպրոցական խմբերի օրինակելի հաստիքացուցակը հաստատելու
մասին» N 188/Մ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝
համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
աշխատակազմի ընդհանուր բաժնի վարիչ Ն. Հարությունյանին՝ սույն հարամանի մասին
տեղեկացնել ուսումնական հաստատությունների տնօրեններին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ դրա գործողությունը
տարածվում է 2015 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ս. ԱՍՐՅԱՆ

ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների նախադպրոցական խմբերի
 օրինակելի հաստիքացուցակ

h/h	Պաշտոնը	Հաստիքային միավորների թիվը՝ կախված խմբերի թվից և օրվա													
		տևողությունից													
		6-օրյա և օրական 6- ժամյա տևողությամբ						5-օրյա և օրական 9- ժամյա տևողությամբ						5-օրյա և օրական 8- ժամյա տևողությամբ	
		1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	1 խումբ	2 խումբ	
1.	Նախադպրոցական բաժանմունքի վարիչ	-	-	0.5	0.5	0.5	1	1	1	1	1	1		1	
2.	Խոհարար	0.5	0.5	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	
3.	Խոհարարի օգնական	-	-	-	0.5	0.5	1	-	0.5	1	1	1	-	-	
4.	Լվացարար	-	-	-	-	-	-	0.75	1	1	1.25	1.75	0.25	0.75	

5. Նախադպրոցական խմբերի ջեռուցման և էլեկտրական սպասարկումը ընդգրկվում է դպրոցի ընդհանուր սպասարկման աշխատանքներում:

6. Նախադպրոցական խմբերին հատկացված տարածքների մաքրման աշխատանքներն իրականացնում են խմբերի դաստիարակների օգնականները, և այդ տարածքների մակերեսները չեն հաշվարկվում դպրոցի ընդհանուր մաքրման չափաքանակում:

7. Դաստիարակի պաշտոն մեկ խմբի հաշվարկով սահմանվում է.

- 6-օրյա աշխատանքային շաբաթի և 6-ժամյա օրական տևողությանը-1 միավոր
- 5-օրյա աշխատանքային շաբաթի և 9-ժամյա օրական տևողությանը-1.25 միավոր
- 5-օրյա աշխատանքային շաբաթի և 8-ժամյա օրական տևողությանը-1.12 միավոր

8. Դաստիարակի օգնականի պաշտոն 1 խմբի հաշվարկով սահմանվում է.

- 6-օրյա աշխատանքային շաբաթի և 6-ժամյա օրական տևողությանը-0.5 միավոր
- 5-օրյա աշխատանքային շաբաթի և 9-ժամյա օրական տևողությանը-1.1 միավոր
- 5-օրյա աշխատանքային շաբաթի և 8-ժամյա օրական տևողությանը-1 միավոր:

9. 8-ժամյա և 9-ժամյա տևողությամբ նախադպրոցական բաժանմունքում սահմանվում են երաժշտական ղեկավարի, պարուսույցի և ֆիզկուլտուրայի հրահանգիչի հաստիքային միավորներ՝ յուրաքանչյուր խմբի համար 0.25-ական դրույքի չափով, իսկ միայն մեկ նախադպրոցական խմբի համար 0,25 միավոր երաժշտական ղեկավար:

10. Տվյալ դպրոցում 6-ժամյա, 8-ժամյա և 9- ժամյա տևողությամբ խմբեր գործելու դեպքում հիմք է ընդունվում առավելագույն տևողությամբ խմբերի հաստիքացուցակը, և ընդհանուր չորս խմբերի առկայության դեպքում հատկացվում է խոհարարի օգնականի 0.5 միավոր:

11. Նախադպրոցական խմբերի սանիտարական վիճակի վերահսկողության և երեխաների բուժսպասարկման աշխատանքները իրականացվում են համապատասխան բժշկական ծառայությունների միջոցով:

12. Նախադպրոցական խմբերի և նախադպրոցական բաժանմունքների ընդհանուր կառավարումն իրականացվում է դպրոցի տնօրենի կողմից, ուսումնադաստիարակչական, մեթոդական և ֆինանսական գործունեությունը իրականացնում և վերահսկում է նախադպրոցական բաժանմունքի վարիչը, իսկ նախադպրոցական բաժանմունքի վարիչի պաշտոն սահմանված չլինելու դեպքում՝ դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, երեխաների սննդի սպասարկման, բաշխման և մյուս տնտեսական աշխատանքներն իրականացնում է դպրոցի տնօրենի տնտեսական աշխատանքների գծով տեղակալը կամ տնտեսվարը:

13. Վերոնշյալ 12-րդ կետում նշված աշխատանքային պարտականությունների կատարման համար դպրոցի տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքների և տնտեսական աշխատանքների գծով տեղակալների կամ տնտեսվարի համար սահմանվում է ամսական հավելավճար՝ համապատասխանաբար նրանց պաշտոնի դրույքաչափի 15% չափով՝ 2 և ավելի նախադպրոցական խմբերի առկայության դեպքում, իսկ 8-ժամյա կամ 9 ժամյա տևողությամբ 1 խմբի դեպքում ամսական հավելավճար տրվում է դպրոցի տնօրենին՝ նրա պաշտոնային դրույքաչափի 10% -ի չափով:

14. Հանրակրթական դպրոցների նախադպրոցական խմբերում ընդգրկվում են միայն ավագ տարիքի երեխաներ: Գյուղական բնակավայրերում կարող են ընդգրկվել տարբեր տարիքային խմբերի երեխաներ:

15. Նախադպրոցական խմբերի երեխաների սննդի ծախսերը սահմանվում են.

6-ժամյա տևողությամբ խմբերի 1 երեխայի հաշվով -200 դրամ, 9-ժամյա և 8-ժամյա տևողության խմբերի համար-566 դրամ:

16. Նախադպրոցական խմբերի երեխաների սննդի համար ծնողական մուծումները սահմանվում են ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված նախադպրոցական հաստատությունների երեխաների ծնողական մուծումների կարգին համապատասխան:

17. Նախադպրոցական խմբերի երեխաների խտությունը սահմանվում է. մեկ խմբում՝ 25-30 երեխա, իսկ գյուղական և առանձնահատուկ դեպքերում քաղաքային վայրերում՝ 10-25 երեխաներ: Մինչև 15 երեխայի դեպքում դաստիարակի օգնականի հաստիքային միավոր չի սահմանվում:

18. Նախադպրոցական խմբերում կարող են ներառվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ՝ մեկ խմբի հաշվարկով առավելագույնը 7 երեխաներ:

19. 8-ժամյա կամ 9-ժամյա տևողությամբ նախադպրոցական խմբերը դպրոցի տարածքից դուրս գտնվող շենքերում գործելու դեպքում հատկացվում է պահակի մեկ հաստիքային միավոր: